ԴԵՊԻ ՄԵԾ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 50-ԱՄՅԱԿԸ

Դ. Մ. ԴԱՎԹՅԱՆ

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՒՐՍԸ ԵՎ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԴԱՇՆԱԿՑԻ ՀԱՐՑԸ

1917 թ. փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը տապալեց ցարական ինքնակալությունը։

Այդ հեղափոխության հաղթանակից հետո բոլշևիկների կուսակցությունը դուրս եկավ ընդհատակից և, զինված լենինյան տեսությամբ, սկսեց ծավալել լայն մասսայական-քաղաքական աշխատանք բանվոր դասակարգի և գյուղացիության մեջ, ամրապնդեց հեղափոխության ձեռք բերած նվաճումները, հանդես եկավ ժամանակավոր կառավարությանը վստահություն հայտնելու դեմ։ ՌՍԴԲԿ Կենտրոնական կոմիտեն մարտի 4-ին հատուկ որոշում ընդունեց, որտեղ նշվում էր, որ ոչ մի համաձայնություն չպետք է կայացնել բուրժուական կառավարության հետ։ Բոլշևիկների կուսակցությունը հանդես եկավ կառավարության նկատմամբ վերահսկողության մենշևիկո-էսեռական լոզունգի դեմ, նշելով, որ բուրժուա-ազնվականական դասակարգերի ներկայացուցիչներից կազմված կառավարությունը ոչինչ չի կարող տալ բանվոր դասակարգին, որ բուրժուազիան չի կարող իր վրա վերցնել պրոլետարիատի ծրագրային խնդիրների կատարումը։ Բանվոր դասակարգը հույսը չպետք է դնի բուրժուազիայի վրա, նա ինքը պետք է գործի։ Վ. Ի. Լենինը կուսակցության առջև խնդիր էր դնում կիրառել հատուկ տակտիկա, թույլ չտալ, որպեսզի բուրժուազիան վերականգնի ոստիկանությունը և փրկի միապետությունը։ Մեր տակտիկան է, գրում էր Լենինը, «...լիակատար անվստահություն, ո՛չ մի աջակցություն նոր կառավարությանը, առանձնապես կասկածում ենք Կերենսկուն, պրոլետարիատի զինումը միակ երաշխիքն է, Պետրոգրադի դումայի (քաղաքային սովետի) անհապաղ ընտրություն, ո՛չ մի մերձեցում մյուս պարտիաների հետ»[1]։

Հեղափոխության հաղթանակից հետո աշխատավորները ձգտում էին ձեռք բերել խաղաղություն, հող, հաց և ազատություն։ Սակայն բուրժուական ժամանակավոր կառավարությունը ոչ միայն չէր մտածում պատերազմը դադարեցնելու մասին, այլ ընդհակառակը, նա հաստատեց ցարական կառավարության բոլոր հին պայմանագրերը և շարունակեց իմպերիալիստական պատերազմը։ Ռուսաստանը նորից կապված մնաց Անտանտի մարտակառքին։ Ժամանակավոր կառավարությունը բոլոր միջոցներին դիմեց, որպեսզի օգտագործի հեղափոխությունն ու այդպիսով իրականացնի իր զավթողական պլանները։ Փետրվարյան հեղափոխությունից հետո չլուծվեց նաև ագրարային հարցը։

Ժամանակավոր կառավարությունը փորձում էր խաբել գյուղացիությանը, հայտարարելով, որ հողային հարցը իբր կլուծի սահմանադիր ժողովը։ Գյուղա-

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 23, էջ. 393։

ցիների կողմից կալվածատերերի հողերի բռնագրավման փորձը ժամանակավոր կառավարությունը ճնշում էր ամենայն խստությամբ։

Կառավարությունը իր պլանների իրագործման ընթացքում հույսը դրել էր մենշևիկների և էսեռների վրա։ Վերջիններս գտնում էին, որ հեղափոխությունն արդեն հաղթանակել է և իշխանությունը գտնվում է բուրժուազիայի ձեռքին, նա կլուծի հաղթանակած հեղափոխության բոլոր խնդիրները, պատերազմի բնույթը իբր փոխվել է, որ այն կրում է ոչ թե իմպերիալիստական, այլ հայրենիքի պաշտպանության բնույթ, և այլն։ Նրանք կոչ էին անում պաշտպանել բուրժուական հայրենիքը։

Բուրժուական ժամանակավոր կառավարությունը փորձում էր ոչնչացնել սովետները, որոնք հանդիսանում էին աշխատավոր և ճնշված ժողովուրդների օրգան, իսկ բոլշևիկների կուսակցությունը մերկացնում էր ժամանակավոր կառավարության ռեակցիոն քաղաքականությունը, բարձրացնում մասսաների քաղաքական գիտակցությունը և ակտիվությունը, նրանց դուրս բերում բուրժուական կառավարության դեմ։ Բոլշևիկները կոչ էին անում ամրապնդել սովետները։ Միայն սովետների ամրապնդումը կենտրոնում և տեղերում ռեալ հող կստեղծեր պայքարելու ընդդեմ հակահեղափոխության։ Անհրաժեշտ էր ամենուրեք կազմակերպել սովետներ։

Փետրվարյան հեղափոխության ամենահիմնական առանձնահատկությունը կայանում էր նրանում, որ երկրում առաջացավ երկիշխանություն։ «Այդ երկիշխանության դասակարգային աղբյուրը և նրա դասակարգային նշանակությունն այն է,—ասում էր Վ. Ի. Լենինը,—որ 1917 թ. մարտի ռուսական ռևոլյուցիան ո՛չ միայն սրբեց-տարավ ամբողջ ցարական միապետությունը, ո՛չ միայն ամբողջ իշխանությունը բուրժուազիային հանձնեց, այլև հասավ ընդհուպ մինչև պրոլետարիատի և գյուղացիության ռևոլյուցիոն-դեմոկրատական դիկտատուրային։ Հենց այդպիսի դիկտատուրա, (այսինքն՝ իշխանություն, որը հենվում է ոչ թե օրենքի, այլ բնակչության զինված մասսաների անմիջական ուժի վրա) և հատկապես մատնանշված դասակարգերի դիկտատուրան են հանդիսանում Պետրոգրադի և այլ վայրերի բանվորների ու զինվորների դեպուտատների տեղական սովետները»[2]։

Ինչպես նշում է Վ. Ի. Լենինը, այդպիսի իշխանությունը երկար գոյություն ունենալ չէր կարող, բնականաբար հարց պետք է առաջ գար, թե նրանցից որը պիտի չքանար։ Մենշևիկները հավատարիմ մնալով 1905 թ. իրենց հին տակտիկային, նորից հայտարարում էին, թե ներկա հեղափոխությունը բուրժուական է, ուստի բնական է, որ իշխանությունը կանցնի բուրժուազիայի ձեռքը, դրա համար էլ բուրժուազիային պետք է օգնել, պաշտպանել և առաջ մղել։ Իսկ ինչ վերաբերվում է պրոլետարիատին, ապա ըստ մենշևիկների, նա ոչ մի դեպքում իշխանությունը իր ձեռքը չպետք է վերցնի։

Իսկ ի՞նչ էր ներկայացնում իրենից բուրժուական ժամանակավոր կառավարությունը։ Այդ կառավարությունը, ասում էր Վ. Ի. Լենինը, մարդկանց մի պատահական հավաքածու չէ։ Այդ նոր դասակարգի ներկայացուցիչներն են[3]։

Բոլշևիկների կուսակցության գլխավոր խնդիրն էր, առաջին հերթին կազմակերպել բանվոր դասակարգին, կենտրոնից մինչև ծայրամասը համատարած կերպով ստեղծել սովետներ և ակտիվ կերպով մասնակցել բանվորների,

2 Վ. Ի. Լենին, Պրոլետարիատի խնդիրները մեր ռևոլյուցիայում, Երկեր, հ. 24, էջ 53։
3 Նույն տեղում։

զինվորների և գյուղացիների դեպուտատների սովետների աշխատանքներին, կազմակերպել գյուղական կոմիտեներ և այլն։ Ծավալված մասսայական-քաղաքական աշխատանքի շնորհիվ Պետրոգրադում, Մոսկվայում, Ուրալում և արդյունաբերական շատ շրջաններում կազմակերպվեցին կարմիր գվարդիական ջոկատներ, որոնք հանդիսանում էին հեղափոխության մարտական ուժերը։

Կուսակցությունը մասսայական-քաղաքական աշխատանք ծավալեց արհմիութենական կազմակերպություններ ստեղծելու և նրանց իր ազդեցության տակ վերցնելու համար։ Ստեղծված ֆաբրիկա-գործարանային կոմիտեներն ընդգրկում էին ձեռնարկությունների բոլոր բանվորներին։ Պետրոգրադի, Մոսկվայի և շատ ուրիշ քաղաքների ֆաբրիկա-գործարանային կոմիտեները արդեն հունիսին գտնվում էին բոլշևիկների կուսակցության ազդեցության ներքո և գործում էին նրա ղեկավարությամբ։

Ռուսական հեղափոխության կոնկրետ խնդիրները, որոնք բխում էին Ռուսաստանի ներքին դրության առանձնահատկություններից և միջազգային բանվորական շարժման խնդիրներից, հանճարեղորեն նախագծեց Լենինն իր հռչակավոր «Ապրիլյան թեզիսներում»։ Ապրիլի 3-ին Վ. Ի. Լենինը էմիգրացիայից վերադարձավ Պետրոգրադ և սոցիալիստական հեղափոխության լոզունգ առաջ քաշեց։ Ապրիլի 4-ին նա հանդես եկավ բոլշևիկների և ապա բոլշևիկների և մենշևիկների միացյալ ժողովներում «Պրոլետարիատի խնդիրների մասին տվյալ հեղափոխությունում» թեզիսներով։ Ապրիլի 4-ին հրատարակվեցին Վ. Ի. Լենինի «Ապրիլյան թեզիսները», որոնք դարձան պատմական մեծագույն կարևորություն ունեցող փաստաթուղթ։ Այդ թեզիսներում պարզ պատասխան տրվեց մեր կուսակցության ստրատեգիայի ու տակտիկայի բոլոր կարևորագույն հարցերին։ Վ. Ի. Լենինը ամենայն պարզությամբ նշեց սոցիալիստական հեղափոխության հաղթանակի համար պայքարելու անհրաժեշտությունը։ Նա գտնում էր, որ ռուսական հեղափոխությունը սկսվելով իբրև բուրժուա-դեմոկրատական հեղափոխություն, իր զարգացման ընթացքում օրակարգի մեջ է դնում պրոլետարիատի դիկտատուրան, կամ այլ կերպ ասած՝ բուրժուա-դեմոկրատական հեղափոխության ավարտումը պետք է միևնույն ժամանակ նրա խաղաղ փոխանցումը լինի սոցիալիստական հեղափոխության։ Վ. Ի. Լենինը նշում էր, որ հեղափոխության հետագա զարգացումը շատ արագ կերպով պետք է դնի իշխանության հարցը։ Փետրվարից հետո հեղափոխությունը թևակոխեց նոր էտապ՝ սոցիալիստական հեղափոխության էտապը։ Այդ ժամանակաշրջանում հեղափոխության հաղթանակով շահագրգռված էին պրոլետարիատն ու չքավոր գյուղացիությունը։ Միջակը տատանվող էր, նա որպես աշխատավոր, հակում ուներ դեպի պրոլետարիատը, իսկ որպես սեփականատեր՝ կուլակությունը։ Այդ իմաստով էլ կուսակցությունը գյուղացիության մասին առաջ քաշեց իր ստրատեգիական երկրորդ լոզունգը, ըստ որի՝ պրոլետարիատը պետք է դաշինք կնքի գյուղական չքավորության հետ ընդդեմ բուրժուազիայի բաղաքում և գյուղում, չեզոքացնելով միջակ գյուղացիությանը։ Միջակ գյուղացիության չեզոքացումը, սակայն, չէր նշանակում այնպիսի չեզոքացում, ինչպիսին բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունում բուրժուազիայի չեզոքացումն էր։ Բուրժուազիային չեզոքացնել՝ նշանակում էր ջլատել ինքնակալության ուժերը, բուրժուազիային զրկել ցարի հետ գործարք կընքելու հնարավորությունից և պայմաններ ստեղծել նրա տապալման համար։

Հեղափոխության երկրորդ էտապում պայքարն ուղղվում է բուրժուազիայի դեմ, նրան ջախջախելու և պրոլետարիատի դիկտատուրա հաստատելու համար։ Միջակի չեզոքացումը երբեք չէր նշանակում միջակի լիկվիդացում, կամ նրա հետ թշնամական հարաբերությունների հաստատում, ընդհակառակը, բոլշևիկների կուսակցությունը վարում էր այնպիսի քաղաքականություն, որպեսզի միջակին անջատի, նրան դուրս մղի բուրժուական և մանր բուրժուական կուսակցությունների ազդեցությունից, նրան դարձնի պրոլետարիատի դաշնակիցը և մասնակիցը սոցիալիստական հեղափոխության, ինչպես այդ կատարվեց 1918 թ. օգոստոս-նոյեմբեր ամիսներին։

Վ. Ի. Լենինը հաշվի առնելով սոցիալիստական հեղափոխության շարժիչ ուժերը, միաժամանակ սահմանեց պրոլետարիատի իշխանության կազմակերպական-քաղաքական ձևը՝ սովետները։ Նա առաջ քաշեց Սովետների հանրապետությունը՝ որպես պրոլետարիատի դիկտատուրայի քաղաքական ձև։

«Ոչ թե պառլամենտական ռեսպուբլիկա,— ասում է Վ. Ի. Լենինը.— Բ. Դ. (բանվորների դեպուտատների— Դ. Դ.) Սովետներից դրան վերադառնալը կլիներ մի քայլ դեպի ետ,— այլ բանվորների, բատրակների ու գյուղացիների դեպուտատների Սովետների ռեսպուբլիկա ամբողջ երկրում, վարից մինչև վեր»[4]։

Այսպիսով, Վ. Ի. Լենինը իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխությունների դարաշրջանում զարգացրեց, մի նոր, ավելի բարձր աստիճանի հասցրեց մարքսիզմի ուսմունքը հասարակության քաղաքական կազմակերպման ձևերի վերաբերյալ, գիտականորեն հիմնավորեց, որ սովետները՝ դա պրոլետարիատի պետական իշխանության քաղաքական ձևն է։

Սոցիալիստական հեղափոխության հաղթանակի համար մղվող պայքարում խոշոր դեր խաղաց բոլշևիկների կուսակցության «Ամբողջ իշխանությունը սովետներին» լոզունգը։ Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունից հետո Ռուսաստանում ստեղծվել էր այնպիսի իրադրություն, երբ բուրժուազիան բացահայտ կերպով ժողովրդական մասսաների վրա բռնություն գործադրել չէր կարող, բոլշևիկների կուսակցությունը ժողովրդական մասսաների մեջ ազատ գործելու բոլոր հնարավորություններն ուներ։ Աշխատավորական մասսաներն իրենց ձեռքին ունեին պետական իշխանության պատրաստի ապարատ, ինչպիսին էր բանվորների, զինվորների դեպուտատների սովետները, որոնք ներկայացնում էին բանվոր դասակարգին և գյուղացիներին, այսինքն՝ ժողովրդի բացարձակ մեծամասնությանը։ Եվ եթե նրանք հայտարարեին, որ ամբողջ իշխանությունը իրենց ձեռքն են վերցնում, ապա երկրում չկար այնպիսի մի ուժ, որը հանդես գար նրա դեմ։ Այսպիսով, ստեղծվել էր ամբողջ իշխանությունը խաղաղ ճանապարհով սովետներին անցնելու հնարավորություն։

Տվյալ էտապում «Ամբողջ իշխանությունը սովետներին» լոզունգի իրականացումը, նշանակում էր սովետների միիշխանության հաստատում, իսկ սովետներում մեծամասնությունը կազմում էին մենշևիկներն ու էսեռները։ Ամբողջ իշխանությունը սովետների ձեռքն անցնելուց հետո, ինչպես նշում էր Վ. Ի. Լենինը, սովետների ներսում կուսակցությունների ու դասակարգերի միջև կծավալվեր պայքար, որի հետևանքով տեղի կունենար իշխանություն ունեցող կուսակցությունների հերթափոխություն սովետների ներսում։ Իսկ դա նշանա-

---

[4] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 24, էջ 6։

կում է, որ բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունից սոցիալիստականի անցումը՝ կարող է տեղի ունենալ խաղաղ զարգացման ճանապարհով։

Վ. Ի. Լենինը նկատի ուներ այն հանգամանքը, որ եթե իշխանությունը ամբողջապես անցներ մենշևիկների և էսեռների ձեռքը, դրանով ոչ մի փոփոխություն չէր կատարվելու, նրանք կշարունակեին իրենց հակաժողովրդական քաղաքականությունը, ինչպես երկրի ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության բնագավառում։ Բայց այս դեպքում սովետներն իրենց կապերը խզած կլինեին բուրժուազիայից և ժողովրդական մասսաները սովետներից կպահանջեին հաց, հող, հաշտություն և ազատություն։ Էսեռներն ու մենշևիկները անընդունակ էին բավարարելու ժողովրդական մասսաների այդ պահանջները, դրանով իսկ նրանք իրենք իրենց կմերկացնեին ժողովրդական լայն զանգվածների առաջ։ Սա մի կողմից։ Իսկ մյուս կողմից բոլշևիկները չմտնելով մենշևիկո-էսեռական կառավարության կազմի մեջ, սովետներում կքննադատեին ու կմերկացնեին մենշևիկո-էսեռական կառավարությանը և կպահանջեին, որպեսզի նա կատարի հեղափոխության կողմից առաջադրվող բոլոր պահանջները։ Այդ ժամանակ իրեն մերկացրած էսեռա-մենշևիկյան կառավարության նկատմամբ աշխատավորության ունեցած հույսերը կցրվեին։ Մասսաները փորձով կհամոզվեին նրանց դավաճանության մեջ և ամբողջ իշխանությունը կհանձնեին բոլշևիկների կուսակցությանը, որը ընդունակ էր լուծելու բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության բոլոր պահանջները։ Այսպիսով, սովետների ներսում ծավալված պայքարի հետևանքով, խաղաղ զարգացման ճանապարհով, առանց քաղաքացիական պատերազմի, բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը կվերաճեր սոցիալիստականի, բանվորների, գյուղացիների հեղափոխական դեմոկրատական դիկտատուրան կվերաճեր պրոլետարիատի դիկտատուրայի։

Վ. Ի. Լենինի տեսական այս դրույթը մենշևիկների ու էսեռների դավաճանական քաղաքականության հետևանքով 1917 թ. փետրվարին հնարավոր չեղավ իրականացնել։

Վ. Ի. Լենինը իր «Ապրիլյան թեզիսներում» ցույց տվեց, որ չնայած փետրվարյան հեղափոխությունը տապալեց ցարական միապետական կարգը, բայց պատերազմը նորից շարունակվում է և այն չի դադարել իմպերիալիստական լինելուց։ Բուրժուական ժամանակավոր կառավարությունը շարունակում էր իր հափշտակողական, կողոպտչական նպատակները իրականացնել պատերազմի միջոցով։ Այդ պատճառով էլ բոլշևիկների կուսակցությունը շարունակեց իր պայքարը թալանչիական պատերազմի դեմ, հանուն իսկական դեմոկրատական հաշտության՝ առանց անեքսիաների ու ռազմատուգանքների։ Բուրժուական ժամանակավոր կառավարության օրոք բոլշևիկների կուսակցությունը պատերազմի հարցում հանդես չեկավ որպես պարտվողական, քանի որ ցարական կառավարությունը արդեն տապալվել էր, երկրում ստեղծվել էր երկու իշխանություն՝ բուրժուական ժամանակավոր կառավարություն և սովետներ։ Վերջիններս ներկայացնում էին բանվոր դասակարգին և գյուղացիությանը, որոնք պատերազմին դեմ էին, պահանջում էին հաշտություն։ Եվ եթե ամբողջ իշխանությունը հանձնվեր սովետներին, ապա և վերջ կդրվեր պատերազմին։ Բոլշևիկների կուսակցությունը հանդես չեկավ նաև որպես պաշտպանողական, ինչո՞ւ, որովհետև դա կնշանակեր պաշտպանել բուրժուական ժամանակավոր կառավարությունը, աջակցել իմպերիալիստական պատերազմին։ Այդ պատ-

ճառով էլ կուսակցությունը հանդես եկավ «Ոչ մի աջակցություն ժամանակավոր կառավարությանը», «Ամբողջ իշխանությունը սովետներին» լոզունգներով։ Առաջնորդվելով Վ. Ի. Լենինի ցուցումներով, բոլշևիկները լայն աշխատանք ծավալեցին ռազմաճակատում և թիկունքում, պարզաբանելով, որ կապիտալի և իմպերիալիստական պատերազմի միջև կա անխզելի կապ, որ չի կարելի վերջ տալ պատերազմին, քանի դեռ չի տապալվել իմպերիալիստական բուրժուազիան։

Այսպիսի պայմաններում պրոլետարիատի կուսակցության խնդիրն էր պայքարել հանուն սովետների նվաճման, անողոքաբար և վճռականորեն սովետներից դուրս վռնդել մենշևիկներին և էսեռներին՝ մերկացնելով ժամանակավոր կառավարությանը, նվաճելով մասսաներին՝ սովետները դարձնելով բոլշևիկյան։

Անողոք պայքար մղելով մենշևիկների և էսեռների դեմ և մերկացնելով նրանց պառլամենտական դեմոկրատական հանրապետության պահանջի էությունը, Լենինը իր թեզիսներում առաջ քաշեց ամբողջ երկրում ներքևից մինչև վերև բանվորների, բատրակների և գյուղացիների պատգամավորների հանրապետություն հաստատելու լոզունգը։

«Բայց մենք, իբրև պրոլետարիատի պարտիա, անպայման պարտավոր ենք,— նշում է Լենինը,— անհապաղ հրապարակ գալ ո՛չ միայն ագրարային (հողային) ծրագրով, այլև անմիջապես իրագործելի գործնական միջոցների քարոզով, հօգուտ Ռուսաստանի գյուղացիական ագրարային ռևոլյուցիայի»[1]։

Մեր կուսակցությունը պահանջում էր բոլոր հողերի ազգայնացում՝ այսինքն՝ նրանց անցումը պետական իշխանության ձեռքը, այն պայմանով, որ հողի տնօրինումը գտնվի ոչ թե չինովնիկների, այլ գյուղացիական պատգամավորների մարզային սովետների ձեռքում։

Ապրիլյան թեզիսներում Լենինը առաջ էր քաշում այն միտքը, որ գյուղացիական կոմիտեների ներսում պետք է ձգտենք, որպեսզի յուրաքանչյուր գրաված կալվածքից ստեղծվի խոշոր օրինակելի տնտեսություն՝ բատրակային պատգամավորների սովետների հսկողության ներքո։ Լենինը նշում էր, որ մեր կուսակցությունը պետք է պարզաբանի գյուղացիներին, որ մանր տնտեսությունը ապրանքային արտադրության օրոք ի վիճակի չէ ազատելու մարդկությանը մասսայական թշվառությունից։

Գյուղացիությունը միատարր զանգված չէր և պրոլետարիատն իշխանությունը գրավելիս կարող էր հենվել միայն բատրակների և չքավոր գյուղացիության վրա։ Ուստի անհապաղ չբաժանելով գյուղացիական պատգամավորների սովետները, պետք է բատրակներին և չքավոր գյուղացիներին ընդգրկել բատրակային կամ չքավորական պատգամավորական առանձին սովետների մեջ, կամ որպես ֆրակցիաներ՝ ընդհանուր սովետների ներսում։

Լենինյան այս ծրագրի դեմ դուրս եկան մանր բուրժուական բոլոր կուսակցությունները։ Մենշևիկները և էսեռները, որպես լիբերալ բուրժուազիայի դրոշակակիրներ, խորհուրդ էին տալիս գյուղացիությանը չգրավել կալվածատերերի հողերը և ագրարային վերահսկողություն չհաստատել, այլ սպասել մինչև որ դումարվի սահմանադիր ժողովը։

---

[1] Վ. Ի. Լենին, Ագրարային և ազգային ծրագիր, Երկեր, հ. 24, էջ 67։

Մենշևիկների ու էսեռների դավաճանությունը քննադատելով, Վ. Ի. Լենինը գրում էր. «Պրոլետարիատի պարտիան պետք է կոչ անի գյուղացիներին անհապաղ, ինքնակամ կերպով իրագործելու հողային բարեփոխությունը և տեղերում գյուղացիների դեպուտատների որոշումներով՝ անհապաղ բռնագրավելու կալվածատիրական հողերը»[6]։

Լենինը խնդիր էր դնում պարզաբանել բանվորներին և գյուղացիներին, որ պրոլետարիատի կուսակցությունը նպատակ չունի անհապաղ սոցիալիզմ «մտցնելու», քանի որ մեր երկիրը մանր գյուղացիական երկիր է, տեխնիկա-տնտեսական տեսակետից թույլ զարգացած, չունի սոցիալիզմի համար անհրաժեշտ բազա՝ ծանր ինդուստրիա, էլեկտրիֆիկացիա և այլն։ Մանր գյուղացիական երկրում բնակչության մեծամասնությունը դեռևս չի հասել այն գիտակցությանը, որպեսզի սոցիալիստական միջոցառումները անհրաժեշտություն համարի։ Սակայն առանց սպասելու պետք է պահանջի հողի, կապիտալիստների բոլոր բանկերի և սինդիկատների ազգայնացումը կամ գոնե նրանց նրկատմամբ բանվորական պատգամավորների սովետների անհապաղ վերահսկողության հաստատումը, վերահսկողություն հասարակական արտադրության և արտադրանքի բաշխման նկատմամբ և այլն։

Կուսակցությունը զինվելով Լենինի ապրիլյան թեզիսներով, համոզում էր բանվորներին, որ առանց այդպիսի միջոցառումների չկա և չի կարող լինել փրկություն։ Ապրիլյան թեզիսները, դա պրոլետարական հեղափոխության մարտական ծրագիրն էր։ Այս ծրագրի հիմնական խնդիրների իրագործումը հսկայական չափով արագացրեց բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունից սոցիալիստական հեղափոխության անցնելու պրոցեսը։

Ապրիլյան թեզիսներով և ապրիլյան կոնֆերենցիայի բոլշևիկյան որոշումներով զինված կուսակցությունը 1917 թ. ապրիլից մինչև օգոստոսը հեղափոխական մասսաներին մոբիլիզացնելու աշխատանք է կատարում, նպատակ ունենալով երկիշխանությունից անցնելու սովետների մենիշխանությանը։ Բոլշևիկները Լենինի ղեկավարությամբ ծավալուն աշխատանք սկսեցին թե բանակում և թե թիկունքում։

Փետրվարյան հեղափոխությունից հետո մեր կուսակցությունը դառնում էր երկրի բանվոր դասակարգի, չքավոր գյուղացիության ու զինվորների ձգողական կենտրոնը։ Ապրիլի 21—22-ի ցույցերն ապացուցեցին բոլշևիկների տակտիկայի ճշտությունը։ Այդ օրերին անկայուն, տատանվող մանր բուրժուական մասսան հետ կանգնեց կապիտալիստներից և սկսեց անցնել հեղափոխական պրոլետարիատի կողմը, համախմբվելով բոլշևիկների դրոշի տակ։ Բուրժուական ժամանակավոր կառավարությունը տեսնելով, որ մենակ անհընարին է իշխանությունը իր ձեռքում պահել, որոշեց «սոցիալիստ-հեղափոխական» ու մենշևիկյան բողով ծածկվել, համաձայնվեց ստեղծել «կոալիցիոն» կառավարություն, կազմված բուրժուազիայի, մենշևիկների և էսեռների ներկայացուցիչներից։ Կազմվեց այսպես կոչված առաջին կոալիցիոն ժամանակավոր կառավարությունը, որի կազմի մեջ բուրժուազիայի հետ միասին մտան մենշևիկներ Սկոբելևը, Ցերետելին, էսեռներ Չերնովը, Կերենսկին և ուրիշները։ Այսպիսով, մենշևիկները եթե ռուսական առաջին հեղափոխության ժամանակ անթույլատրելի էին համարում սոցիալ-դեմոկրատիայի ներկայացուցիչների

---

6 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 24, էջ 69։

մասնակցությունը հեղափոխական կառավարությանը, ապա այժմ թույլատրելի համարեցին իրենց ներկայացուցիչների մասնակցությունը ժամանակավոր հակահեղափոխական կառավարության մեջ։

Պետրոգրադի սովետը, սակայն, հակառակ բուրժուազիայի, մենշևիկների ու էսեռների այդ քաղաքականությանը, հունիսի 18-ին ցույց կազմակերպեց, որին մասնակցում էին ավելի քան 400 հազար մարդ։ Ցուցարարները անցնում էին բոլշևիկյան լոզունգներով՝ «Կորչեն տաս կապիտալիստ մինիստրները», «Ամբողջ իշխանությունը սովետներին»։ Հունիսի 18-ի ցույցը, բոլշևիկյան կուսակցության ուժերի իսկական ստուգատես հանդիսացավ։ Նա ցույց տվեց մասսաների հարաճուն հեղափոխականությունը և նրանց վստահությունը դեպի բոլշևիկյան կուսակցությունը։

«Ցույցի վիթխարի թափը և նրանում բոլշևիկյան լոզունգների գերակշռությունը վկայում էին, որ մայրաքաղաքի պրոլետարիատը և կայազորը գնում են բոլշևիկների հետևից։ Ցույցը ապացուցեց, որ մասսաները չեն վստահում ոչ միայն ժամանակավոր կառավարությանը, այլև բուրժուազիայի հետ համաձայնություն կնքելու քաղաքականությանը, որ կիրառում էին էսեռներն ու մենշևիկները»[7]։

Հունիսի 18-ի ցույցը ապացուցեց, որ մասսաները համախմբվում են բոլշևիկների դրոշի տակ։ Այդ առանձին պարզությամբ ցույց տվին մանավանդ հուլիսի 3—5-ի դեպքերը։

Սովետների մենշևիկո-էսեռական կենտրոնական գործադիր կոմիտեի (ԿԳԿ) օգնությամբ բուրժուական ժամանակավոր կառավարությանը հաջողվեց զինված ուժի միջոցով ճնշել այդ ցույցերը։ Դրանից հետո մենշևիկների և էսեռների համաձայնությամբ ու նրանց անմիջական օգնությամբ ժամանակավոր կառավարությունը հարձակման անցավ հեղափոխական մասսաների ու բոլշևիկների կուսակցության դեմ։ «Պրավդա»-ի խմբագրության շենքն ավերվեց, «Սոլդատսկայա Պրավդան» և բոլշևիկյան մի շարք օրգաններ փակվեցին, սկսեցին զինաթափ անել կարմիր գվարդիականներին։ Պետրոգրադի կայազորի հեղափոխական զորամասերը ճակատ ուղարկվեցին։ Սկսվեցին ձերբակալությունները ճակատում և թիկունքում։ 1917 թ. հուլիսի 7-ին Լենինին ձերբակալելու հրաման տրվեց։ Ձերբակալվեցին բոլշևիկների կուսակցության մի շարք ղեկավար գործիչներ։ Այսպիսով, կոալիցիոն ժամանակավոր կառավարությունը գլորվեց բացահայտ իմպերիալիզմի և հակահեղափոխության ճահիճը։

Հուլիսյան օրերը փոխեցին իրադրությունը և դասակարգային ուժերի հարաբերակցությունը երկրում։ Մենշևիկներն ու էսեռները բուրժուազիայի հետ համաձայնության գալու իրենց քաղաքականությունն ավարտեցին նրանով, որ վերջնականապես անցան հակահեղափոխության լագերը։ Բուրժուազիայի հետ համաձայնության կուսակցությունից էսեռներն ու մենշևիկները դարձան հակահեղափոխության գործակիցների կուսակցություն։ «Երկիշխանությունը վերջացավ։ Բուրժուազիան հասավ միիշխանության, ամբողջ իշխանությունը անցավ նրա ձեռքը։ Էսեռա-մենշևիկյան սովետները դարձան բուրժուական կառավարության կցորդը»[8]։

---

7 ՍՄԿՊ պատմություն, Հայպետհրատ, Երևան, 1959, էջ 268։
8 ՍՄԿՊ պատմություն, էջ 270—271։

Այժմ պրոլետարիատը իշխանություն կարող էր կրավել միայն զինված պայքարի միջոցով։

Կուսակցությունն առաջ քաշեց նոր լոզունգ՝ զինված ապստամբությամբ բուրժուական ժամանակավոր կառավարությունը տապալելու և իշխանությունը բանվորներին ու չքավոր գյուղացիներին հանձնելու լոզունգը։ «Հատկապես հենց մինչև հուլիսի 4-ը,— ասում էր Վ. Ի. Լենինը,— ամբողջ իշխանությունը տվյալ այն ժամանակվա Սովետներին անցնելու լոզունգն էր միակ ճիշտ լոզունգը։ Այն ժամանակ այդ հնարավոր էր խաղաղ կերպով, առանց քաղաքացիական պատերազմի, որովհետև այն ժամանակ դեռ սիստեմատիկ բռնություններ չկային մասսայի վերաբերմամբ, ժողովրդի վերաբերմամբ, բռնություններ, որոնք մտցվեցին հուլիսի 4-ից հետո։ Այն ժամանակ այդ ապահովում էր ամբողջ ռևոլյուցիայի խաղաղ առաջընթաց զարգացումը և, մասնավորապես, դասակարգերի ու պարտիաների՝ Սովետների ներսում կատարվող պայքարի վերացման հնարավորությունը։

Հուլիսի 4-ից հետո իշխանության անցումը Սովետներին անհնարին դարձավ առանց քաղաքացիական պատերազմի, որովհետև իշխանությունը հուլիսի 4—5-ից անցավ ռազմական, բռնապարտիստական կլիկի ձեռքը, որին պաշտպանում են կադետներն ու սևհարյուրակայինները»[9]։

Վ. Ի. Լենինը այս պայմաններում կուսակցության առաջ խնդիր էր դնում ավելի ևս ուժեղացնել ագիտացիան և պրոպագանդան, պարզաբանել մասսաներին կոալիցիոն ժամանակավոր կառավարության քաղաքականությունը, պարզաբանել Կերենսկու-Չերնովների, Ծերեթելի-Սկոբելևների դավաճանությունը ժողովրդի նկատմամբ։

1917 թ. հուլիսի 26-ից մինչև օգոստոսի 3-ը տեղի ունեցավ բոլշևիկների կուսակցության 6-րդ համագումարը։ Համագումարը իր որոշման մեջ նշեց, որ սոցիալիստական հեղափոխության շարժիչ ուժերը հանդիսանում են քաղաքային պրոլետարիատը և ամենաչքավոր գյուղացիությունը, որ նրանք էլ պետք է իշխանությունը վերցնեին իրենց ձեռքը։ «Ո՛չ մի բան,— գրում էր Վ. Ի. Լենինը,— ո՛չ մի ուժ չի կարող բերել բուրժուական կոնտրռևոլյուցիայի տապալումը, բացի ռևոլյուցիոն պրոլետարիատից։ Հենց ռևոլյուցիոն պրոլետարիատն է, որ 1917 թ. հուլիսի փորձից հետո պետք է ինքնուրույնաբար իր ձեռքը վերցնի պետական իշխանությունը։— դրանից դուրս ռևոլյուցիայի հաղթություն լինել չի կարող։ Իշխանությունը պրոլետարիատի ձեռքին, ամենաչքավոր գյուղացիության կամ կիսապրոլետարների աջակցությամբ,— ահա միակ ելքը»[10]։

Կուսակցության 6-րդ համագումարը առաջադրեց տեսական դրույթ այն մասին, որ Ռուսաստանը կհանդիսանա դեպի սոցիալիզմ ուղի հարթող երկիրը՝ դեն նետելով տրոցկիստների այն պնդումը, թե Ռուսաստանը կարող է դեպի սոցիալիզմ գնալ միայն արևմուտքի պրոլետարական հեղափոխության աջակցության դեպքում։

Պատմության հետագա ընթացքը փայլուն կերպով հաստատեց Վ. Ի. Լենինի հանճարեղ կանխատեսությունը։ Զինված կուսակցության 6-րդ համագումարի որոշումներով, Վ. Ի. Լենինի ցուցումներով, կուսակցությունը նոր ուժով

---

9 Վ. Ի. Լենին, Մատերի հետևում չեն տեսնում անտառը, Երկեր, հ. 25, էջ 316—317։
10 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 25, էջ 231։

սկսեց պայքարը հեղափոխության վերելքի համար, որը պետք է հանգեցներ սոցիալիստական հեղափոխության հաղթանակին Ռուսաստանում։ Համագումարից հետո Վ. Ի. Լենինը մեծ խորաթափանցությամբ բացահայտում և մերկացնում է ժամանակավոր կառավարության քաղաքականությունը, օտարերկրյա իմպերիալիստների և Ռուսաստանի կապիտալիստների մեքենայությունները, որոնք ուղղված էին Ռուսաստանում հասունացող հեղափոխության դեմ։

«Ռուսաստանում փետրվարի 27-ից մինչև հուլիսի 4-ը տևող դասակարգային և պարտիական պայքարի զարգացման ցիկլը վերջացավ։ Սկսվում է նոր ցիկլ, որի մեջ մտնում են ո՛չ թե հին դասակարգերը, ո՛չ թե հին պարտիաները, ո՛չ թե հին Սովետները, այլ պայքարի հրով նորոգվածները, պայքարի ընթացքով կոփվածները, վարժվածները, վերաստեղծվածները։ Պետք է նայել ո՛չ թե դեպի ետ, այլ դեպի առաջ»[11]։

Հեղափոխությունը ջախջախելու և ռազմական դիկտատուրա հաստատելու նպատակով գեներալ Կորնիլովը՝ Կերենսկու համաձայնությունն ունենալով, Պետրոգրադի վրա շարժեց հակահեղափոխական զորամասերը։ Պետրոգրադի և Մոսկվայի սովետները կուսակցության Կենտրոնական կոմիտեի ղեկավարությամբ կազմակերպեցին հեղափոխության պաշտպանությունը։ Կորնիլովի զորքերի դեմ շարժվեցին հեղափոխական ջոկատները, նավաստիները և Պետրոգրադի զինված բանվորները։ Կորնիլովշչինան ջախջախվեց։ Կորնիլովին ջախջախելու համար Վ. Ի. Լենինը առաջ քաշեց հետևյալ տակտիկան։ «Մազաչափ անգամ չթուլացնելով թշնամությունը դեպի Կերենսկին, ետ չվերցնելով և ոչ մի խոսք, որ ասված է նրա դեմ, չհրաժարվելով Կերենսկուն տապալելու խնդրից, մենք ասում ենք. պետք է հաշվի առնել մոմենտը, մենք հիմա դեռ չենք տապալի Կերենսկուն, մենք այժմ այլ կերպ կմոտենանք նրա դեմ պայքարելու խնդրին, այն է՝ պարզաբանել ժողովրդին (որ պայքարում է Կորնիլովի դեմ), Կերենսկու բուլությունն ու տատանումները։ Այդ բանն արվում էր նաև առաջ։ Բայց հիմա գլխավորն այդ է դարձել. այս է ձևափոխությունը»[12]։ «Հիմա գործի ժամանակ է, պատերազմը Կորնիլովի դեմ պետք է մղել ռևոլյուցիոն կերպով, ներգրավելով մասսաներին, բարձրացնելով նրանց, բորբոքելով նրանց. (իսկ Կերենսկին վախենում է մասսաներից, վախենում է ժողովուրդներից)»[13]։

Բոլշևիկների կուսակցությունը ղեկավարվելով Լենինի առաջադրած տակտիկայով, ջախջախելով Կորնիլովշչինան, միաժամանակ պայքարում էր բանվորների սպառազինման, հակահեղափոխականների ձերբակալման, հեղափոխական զորամասերը մայրաքաղաքին մոտեցնելու, կալվածատիրական հողերը գյուղացիներին հանձնելու, պարենի և գործարանների վրա բանվորական վերահսկողություն հաստատելու համար։

Կորնիլովի ջախջախումից հետո ժողովրդական մասսաները սկսեցին ավելի լավ ճանաչել էսեռներին ու մենշևիկներին, որոնք քողարկում էին բուրժուազիային և կալվածատերերին։ Գյուղացիները հասկացան, որ գեներալները փաստորեն պաշտպանում են կալվածատերերի շահերը, որոնք չեն ուզում հող տալ գյուղացիներին։ Զինվորները քաջ գիտակցեցին, որ բուրժուազիան չի ուզում

11 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 25, էջ 232։
12 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 25, էջ 362։
13 Նույն տեղում, էջ 366։

վերջ տալ պատերազմին՝ որ նա ձգձգում է արյունահեղ պատերազմը։ Ճնշվող ազգերը գիտակցեցին, որ իրենց ազատությունն ու անկախությունը հնարավոր է միայն բուրժուական ժամանակավոր կառավարության տապալման և ամբողջ իշխանությունը բանվորներին և գյուղացիներին հանձնելու միջոցով։

Կոռնիլովյան ապստամբության պարտությունը շատ բան փոխեց։ Սովետների մեծ մասը, այդ թվում Պետրոգրադի և Մոսկվայի սովետներն անցան բոլշևիկների ձեռքը։ Գյուղական սովետների մեծ մասը նույնպես անցավ բոլշևիկների կողմը։ «Մենք հազարավոր անգամ ասել ենք,— գրում էր Վ. Ի. Լենինը,— որ բանվորների և զինվորների դեպուտատների Սովետներն ուժ են, որ նրանք ռևոլյուցիայի ավանգարդն են, որ նրանք կարող են իշխանությունն իրենց ձեռքը վերցնել»[14]։

Գյուղացիական ապստամբությունները դարձել էին համազգային քաղաքական նշանակություն ունեցող իրադարձություն։ Ահա թե ինչու Վ. Ի. Լենինը նշում էր. «Վերջապես արդի կյանքի ամենախոշոր փաստը Ռուսաստանում գյուղացիական ապստամբությունն է»[15]։

Բոլշևիկների կուսակցությունը բազմաթիվ անգամ պարզաբանել է այն իրական ճշմարտությունը, որ պրոլետարիատի դիկտատուրայի հաղթանակը մի երկրում, ինչպես ասում է Վ. Ի. Լենինը, «ստեղծում է հսկայական փոփոխություններ թե՛ միջազգային դրության մեջ, թե՛ երկրի էկոնոմիկայի մեջ, թե՛ բանակի դրության մեջ, թե՛ նրա տրամադրության մեջ,— և մենք այժմ «մոռանա՞նք» այս բոլորը, թույլ տալով, որ վախեցնեն մեզ ռևոլյուցիայի դժվարություններով»[16]։ Ոչ,— ասում է Լենինը,— դա կլիներ հեղափոխության գործին, միջազգային պրոլետարների գործին դավաճանություն։

Բոլշևիկները բոլոր դեպքերում հաշվի են առել և երբեք չեն ժխտել իշխանության գրավման դժվարությունները։ Իմպերիալիստական պատերազմի ժամանակ բոլշևիկները միշտ պրոպագանդել ու համոզել են բանվոր դասակարգին և աշխատավոր գյուղացիներին պրոլետարիատի ու ամենաչքավոր գյուղացիության դիկտատուրա հաստատելու մասին, բանվոր դասակարգի և չքավոր գյուղացիության դաշինքի ամրապնդման մասին, այդ դաշինքի մեջ տեսնելով պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխության հաղթական ավարտը։ Իսկ այժմ երբ հասել է հեղափոխական գործողությունների ժամը, ոչ միայն չի կարելի հրաժարվել դրանից, այլև չի կարելի կորցնել մոմենտը, մանավանդ, որ մասսաների տրամադրությունը, ինչպես ընդգծում էր Վ. Ի. Լենինը, համակենտրոնացված և սպասողական է։

Վ. Ի. Լենինը գրում է. ապստամբության համար անհրաժեշտ է «գիտակիցների գիտակցական, հաստատուն և անդրդվելի վճռականությունը՝ կռվելու մինչև վերջը, այս՝ մեկ կողմից։ Իսկ մյուս կողմից՝ հարկավոր է կենտրոնացված-մոլեգին տրամադրությունը լայն մասսաների, որոնք զգում են, կիսամիջոցներով այժմ ոչինչ չի կարելի փրկել...»[17]։

Տնտեսական և ռազմա-քաղաքական ճգնաժամը երկրի ներսում արագ կերպով աճում էր։ Մենշևիկների ու էսեռների լիակատար մեկուսացումը փաստ էր արդեն։ Նրանց շարքերում առաջ էր եկել բարոյալքում ու քայքայում։ Գյուղի

14 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 233։
15 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 231։
16 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 246։
17 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 248—249։

աշխատավորները հաշվի չառնելով տեղական ու շրջանային օրգաններին, գրավում էին կալվածատերերի հացը, անասունները և հողերը։

Հեղափոխությունը հասունանում էր և ապրիլից մինչև կոռնիլովշչինայի ջախջախումը ստեղծվեց այն քաղաքական բանակը, որի վրա հենվելով բոլշևիկների կուսակցությունն այժմ կարող էր տապալել բուրժուազիայի տիրապետությունը և երկրում հռչակել պրոլետարիատի դիկտատուրա։

Սեպտեմբերին Լենինն իր նամակներում գրում էր, որ մեծամասնությունը շահելով Պետրոգրադի և Մոսկվայի բանվորների և զինվորների պատգամավորների սովետներում, բոլշևիկները կարող են իրենց ձեռքը վերցնել և պետք է վերցնեն պետական իշխանությունը։ «Հարցն այն է,— գրում է Լենինը,— որ պարտիայի համար պարզ դարձնենք խնդիրը, օրակարգի հարց դարձնենք զինված ապստամբությունը Պետերում և Մոսկվայում (իր մարզերի հետ), իշխանության նվաճումը և կառավարության տապալումը»[18]։

Համեմատելով սեպտեմբերյան օրերը հուլիսյան օրերի հետ, Լենինը գրում էր, որ հուլիսին ապստամբությանը դիմել —սխալ կլիներ, որովհետև 1. Բանվոր դասակարգի մեծամասնությունը, որ հեղափոխության ավանգարդն է հանդիսանում, այն ժամանակ դեռ բոլշևիկների հետևից չէր գնում։ 2. Այն ժամանակ համաժողովրդական հեղափոխական վերելք չկար։ 3. Տատանում չկար բուրժուազիայի և մանր բուրժուազիայի շարքերում։ Այժմ այդպես չէ, հուլիսյան օրերի և Կոռնիլովի արկածի շնորհիվ այդ բոլոր պայմանները հիմա բարենպաստ են և կուսակցությունը դանդաղելու իրավունք չունի. «Սպասել չի կարելի։ Ռևոլյուցիան կկործանվի»,— ասում էր Վ. Ի. Լենինը։

Վ. Ի. Լենինի նամակներն ու հոդվածները հոկտեմբեր ամսի սկզբին բացառիկ նշանակություն ունեցան։ Նա Հոկտեմբերյան հեղափոխության իսկական ներշնչողն ու ղեկավարն էր։ Նախահոկտեմբերյան օրերին բոլշևիկների շարքերում Զինովևը, Կամենևը և ուրիշներ դեմ կանգնեցին զինված ապստամբության լենինյան պլանին։ Բանվոր դասակարգի այդ դավաճանները չէին հավատում նրա հաղթանակին։ Վ. Ի. Լենինը ջախջախիչ հարված հասցնելով նրանց ու հանճարեղ կերպով, իրեն հատուկ խորությամբ, հաշվի առնելով պայքարող ուժերի հարաբերությունը, գրում էր. «Ո՛չ, կասկածել այժմ այն բանում, որ ժողովրդի մեծամասնությունը գնում է և կգնա բոլշևիկների հետևից, նշանակում է խայտառակ կերպով տատանվել և գործնականում դեն գցել պրոլետարական ռևոլյուցիոնականության բոլոր սկզբունքները, բոլորովին հրաժարվել բոլշևիզմից»[19]։

Հաղթանակը շահելու նպատակով Վ. Ի. Լենինը մշակեց ապստամբության ամենամանրամասն պլանը։

Կենտկոմի հոկտեմբերի 16-ի նիստը պաշտպանում է Վ. Ի. Լենինի զինված ապստամբության վերաբերյալ բանաձևը և մերկացնում Կամենևի և Զինովևի դիրքի հակահեղափոխական լությունը։

Հոկտեմբերի 25-ին հեղափոխությունը հաղթանակեց։ Բուրժուական ժամանակավոր կառավարությունը տապալվեց, իշխանությունն անցավ բանվորների ու գյուղացիների ձեռքը, հաստատվեց պրոլետարիատի դիկտատուրա։

---

18 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 3։
19 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 233։

Կոմունիստական կուսակցությունը դարձավ կառավարող կուսակցություն, որը համարձակորեն լուծեց իր առաջ կանգնած ծանր ու դժվարին խնդիրները՝ երկիրը փրկեց տնտեսական ու ազգային աղետից, մեկընդմիշտ լուծեց ագրարային հարցը՝ կալվածատերերից բռնագրավված հողը անհատույց տվեց գյուղացիներին։ Կենսագործվեց երկրում եղած ամբողջ հողի ազգայնացումը, փշրվեց բուրժուական պետական ապարատը և նրա փոխարեն ստեղծվեց սովետական սոցիալիստական պետական ապարատ։

Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ պրոլետարիատը բուրժուազիայից վերցրեց արտադրամիջոցները՝ ֆաբրիկաներն ու գործարանները, հանքերը, բանկերն ու տրանսպորտը և այն դարձրեց ամբողջ ժողովրդի սեփականությունը։ Պրոլետարիատը դարձավ տնտեսական ու քաղաքական իշխանության տերը։ Նա պատմության մեջ առաջին անգամ սովետական սոցիալիստական շինարարության հիմքը դրեց։

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը դա սոցիալիստական հեղափոխության շարժիչ ուժերի հարցում լենինյան տեսության հաղթանակն էր տրոցկիստների ու մանր բուրժուական համաձայնողական կուսակցությունների դեմ մղած պայքարում։

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո ժողկոմսովետը 1917 թ. նոյեմբերի 2-ին հռչակեց «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիան», ազդարարեց ամեն տեսակի ազգային արտոնությունների ու սահմանափակումների վերացում, բոլոր ժողովուրդների հավասարություն ու սուվերենություն, նրանց ազատ ինքնորոշում ընդհուպ մինչև անջատումը, և ինքնուրույն պետություն կազմելը։

Ռուսաստանում հաղթանակած հեղափոխությունը մեծ արձագանք գտավ նաև Անդրկովկասում։ Երկրամասի աշխատավորները ցնծությամբ դիմավորեցին սոցիալիստական հեղափոխության հաղթանակի լուրը և իրենց միտինգներում ընդունած բանաձևերում ողջունեցին Պետրոգրադի ապստամբ բանվորներին ու զինվորներին և համերաշխություն ու պատրաստակամություն հայտնեցին կրծքով պաշտպանելու սովետական իշխանությունը։ Առջևից գնաց Բաքվի պրոլետարիատը։ 1917 թ. նոյեմբերի 2-ին Ստ. Շահումյանի գլխավորությամբ Բաքվում հռչակվեց սովետական իշխանություն։

Հայաստանի աշխատավորությունը բոլշևիկների ղեկավարությամբ նույնպես նախապատրաստվեց Պետրոգրադի, Մոսկվայի և մյուս ապստամբ բանվորների, զինվորների ու գյուղացիների հետ միաժամանակ ապստամբություն բարձրացնել տեղերում ժամանակավոր կառավարության օրգանները տապալելու, Անդրկովկասում սովետական իշխանություն հաստատելու համար։ Կովկասյան բանակի Երկրային հեղափոխական սովետը 1917 թ. դեկտեմբերի 28-ի նիստում ընտրեց կովկասյան բանակի ռազմա-հեղափոխական կոմիտե։ Հայաստանում նույնպես կազմակերպվում են ռազմա-հեղափոխական կոմիտեներ։

Սովետի նիստը միաժամանակ որոշեց բոլոր զորամասերում ու կայազորներում ստեղծել ռազմա-հեղափոխական կոմիտեներ։ Կենսագործելով կովկասյան բանակի Երկրային սովետի որոշումները, բազմաթիվ կայազորներում՝ Սարիղամիշում, Էրզրումում, Ալեքսանդրապոլում, Ջուլֆայում, Շահթախտում, Հաղպատում և այլ վայրերում ստեղծվում են ռազմա-հեղափոխական կոմիտեներ։

1918 թ. հունվարի 2-ին Սարիղամիշի ռազմա-հեղափոխական կոմիտեն տապալում է ժամանակավոր կառավարության օրգանները և ամբողջ իշխանությունը վերցնում է իր ձեռքը ու սովետական իշխանություն հռչակում։

Կովկասյան բանակի հեղափոխական զորամասերի և նրանց ռազմա-հեղափոխական կոմիտեների գործունեությունը նոր թափ հաղորդեցին Հայաստանի բանվորների ու գյուղացիների հեղափոխական պայքարին։ Ամրապնդվում էր նրանց մարտական դաշինքը։

Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կոմիտեի գլխավորությամբ ռազմա-հեղափոխական կոմիտեն մի քանի օրում բանվորներից ստեղծեց ավելի քան 500 հոգուց կազմված կարմիր գվարդիական ջոկատներ։

ՌՍԴԲ(բ)Կ կովկասյան Երկրային կոմիտեն գյուղացիական հեղափոխական շարժումները միավորելու, այն բանվոր դասակարգի և զինվորական հեղափոխական շարժումների հետ միակցելու համար Լոռի է ուղարկում Ա. Մռավյանին։ Կատարելով կովկասյան Երկրային կոմիտեի ցուցումները Հաղպատի բոլշևիկյան կոմիտեն 1918 թ. ապրիլի կեսերին ապստամբ ջոկատներին կալվածատիրական հողերը բռնագրավելու հրահանգ է տալիս։

Այդ նպատակով էլ ապրիլին Լոռու շրջանի Հաղպատ, Շնող, Արդվի և մի շարք ուրիշ գյուղերում ստեղծվում են գյուղական ռազմա-հեղափոխական կոմիտեներ, որոնք կազմակերպելով չքավոր գյուղացիներին ու բատրակներին ստեղծում են զինված ջոկատներ, որոնք բռնագրավում են Արամյանի կալվածքները և ի նշան հաղթանակի Ախթալայում՝ նրա առանձնատան վրա բարձրացնում կարմիր դրոշը։ Ապստամբությունը տարածվում է նաև Լոռու շրջանի մյուս գյուղերում (Շամուտ, Մղարթ, Մարց և այլն)։ Ռազմա-հեղափոխական կոմիտեները Լոռու շատ գյուղերում բռնագրաված հողը, հացահատիկը և գույքը բաժանում էին չքավոր գյուղացիներին։ Նրանք ամրապնդում էին շրջանի ապստամբ գյուղերի ինքնապաշտպանության ջոկատները։

Չնայած Հայաստանում հեղափոխությունը լայն ծավալ ստացավ, բայց հեղափոխության օջախները կտրված էին միմյանցից, դեռևս թույլ էր բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը։

Հեղափոխական կոմիտեները հետագա ծավալում չգտան հատկապես գյուղական շրջաններում։ Դա բացատրվում է ամենից առաջ նրանով, որ 1918 թ. սկզբներին կովկասյան զորքերը դուրս բերվեցին հայկական շրջաններից։ Օգտվելով այս հանգամանքից գերմանա-թուրքական բարբարոսները ներխուժեցին Հայաստան, զավթեցին նրա տերիտորիայի մեծ մասը և արյունալի կոտորածներ սկսեցին սովետական իշխանության համար պայքարի ելած բանվոր դասակարգի, գյուղացիության և նրանց ավանգարդի՝ կոմունիստական կուսակցության նկատմամբ։ Պարզ է, որ այսպիսի պայմաններում ռազմա-հեղափոխական կոմիտեները գործել չէին կարող և 1918 թ. մայիսից ժամանակավորապես դադարեցրին իրենց գործունեությունը։

Անդրկովկասը ժամանակավորապես ընկավ օտարերկրյա իմպերիալիստների ու նրանց կամակատար, տեղական բուրժուական մարիոնետային կառավարությունների լծի տակ։ 1918 թ. մայիսից Հայաստանում հաստատվեց հայ ժողովրդի ոխերիմ թշնամի դաշնակցականների դիկտատուրան։

Չնայած ռազմա-հեղափոխական կոմիտեների գործունեության ժամանակավոր դադարեցմանը, այնուամենայնիվ նրանց պայքարի փորձը մեծ նշանակություն ունեցավ ինչպես Անդրկովկասի, այնպես էլ Հայաստանի

բանվորների, զինվորների ու գյուղացիների դաշինքի հետագա ամրապնդման ու սովետական իշխանության հաստատման համար մղած պայքարի համար։

Դաշնակցությունը իր ողբերգական տիրապետության երկու և կես տարիների ընթացքում (1918 թ. մայիսից մինչև 1920 թ. նոյեմբերի 29-ը), կատարելով իմպերիալիստական տերությունների կամքը, ավելի բորբոքեց հայ ժողովրդի առանց այն էլ խոր վերքերը, նրանց կանգնեցրեց կործանման եզրին։

Բանվորների, զինվորների, գյուղացիների ու ծառայողների սերտ դաշինքը պողպատյա ամրությամբ կանգնեց դաշնակցական արյունոտ կառավարության դեմ։ 1919 թ. աշնանից նոր ուժով սկսվեցին հեղափոխական շարժումները, որոնք կազմակերպում և ղեկավարում էին Հայաստանի բոլշևիկները։ Հայաստանի փոստ-հեռագրական ցանցի բանվոր-ծառայողների գործադուլները, որոնց մասնակցեցին՝ Երևանի, Ալեքսանդրապոլի, Կարսի, Սարիղամիշի, Ղարաքիլիսայի, Կաղզվանի, Դիլիջանի, Իգդիրի և այլ շրջանների փոստ-հեռագրական ցանցի բանվորները, համահայաստանյան բնույթ կրեցին։

1919 թ. հոկտեմբերին սկսվեց Ալեքսանդրապոլի տպագրական բանվորների և երկաթուղայինների գործադուլը։

1920 թ. հունվարից սկսած լայն ծավալ ընդունեցին բանվորների, զինվորների ու գյուղացիների մասսայական ելույթները, որոնք ուղղված էին դաշնակցական կառավարության դեմ։ Նման հեղափոխական ելույթներ տեղի ունեցան Ալեքսանդրապոլում, Սարիղամիշում, Կարսում, Երևանում և այլ քաղաքներում ու շրջաններում։

Բանվոր դասակարգի հեղափոխական պայքարի ազդեցությունը լայն տարածում գտավ նաև գյուղացիության մեջ։ 1919—1920 թվականներին բանվորների հեղափոխական պայքարին զուգընթաց սկսվեցին նաև գյուղացիական հակակառավարական ելույթները։ Երկիրն ապրում էր տնտեսական աներևակայելի ծանր պայմաններում, սովն ընդգրկել էր ամբողջ երկիրը, ազգամիջյան կռիվները, անօրինակ հարկերը, աշխատուժի և քաշող անասունների մոբիլիզացիան, երկրում տիրող անօրինականությունն ու կամայականությունը, դաշնակցական կառավարության ավանտյուրիստական քաղաքականությունը, մաուզերիստների ու խմբապետների թալանն ու ավազակային գործողությունները խորացրին ու սրեցին դասակարգային պայքարը գյուղում։ Գյուղացիները հաշվի չառնելով տեղական իշխանություններին, բռնագրավում էին կալվածատերերի հողերը։ Նրանք գրավեցին Սադախլուի, Ճոճկանի, Հաղպատի, Ախտայի և Կոտայքի շրջանների կալվածատերերի հողերը։ Վանքապատկան և կալվածատիրական հողերի բռնագրավման համար ոտքի ելան Էջմիածնի գավառի գյուղացիները։

Երկրի բանվոր դասակարգի և գյուղացիության մեջ հեղափոխական կրակը գնալով ավելի ու ավելի էր բորբոքվում ու ընդգրկում աշխատավորական բոլոր խավերին։ Դասակարգային այդ սուր պայքարում ավելի էր ամրապրնդվում բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքը։ Նրանք այժմ ավելի քան երբևէ գիտակցում էին, որ ստեղծված ծանր կացությունից և ֆիզիկական բնաջնջումից ազատագրվելու միակ ելքը դաշնակների արյունոտ իշխանության տապալումն էր և երկրում սովետական իշխանության հաստատումը։

1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանի բանվոր դասակարգն ու աշխատավոր գյուղացիությունը Հայաստանի կոմունիստական կուսակցության ղե-

կավարությամբ տապալեցին դաշնակների ավանտյուրիստական իշխանությունը և երկրում հռչակեցին սովետական կարգեր։

Սոցիալիստական հասարակարգի կառուցումը մեր երկրում վերացրեց քաղաքի և գյուղի միջև դարեր շարունակ գոյություն ունեցող հակամարտությունը։ Քաղաքում և գյուղում ստեղծվեց սոցիալիզմի նյութա-տեխնիկական հզոր բազա։

Վ. Ի. Լենինը հավատացած էր, որ նոր հասարակարգի հիմքը՝ դա բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքն էր, որ ուշ թե շուտ կապիտալիզմից սոցիալիզմին անցնող բոլոր երկրները հաջողությամբ կիրականացնեն սոցիալիստական վերափոխումներն այն ժամանակ, երբ բանվոր դասակարգն ամուր դաշինք կնքի գյուղացիության հետ։ Առանց այդպիսի դաշինքի սոցիալիստական որևէ վերափոխում պատկերացնել անհնարին է։